

ԼԱ. — Յովսէփ Գրիչ Եւ Կազմող, 1512
+ 33, Աղթամարի մէջ օրինակած է,

1. — Շարական, 1512ին, ի Ս. Ղազար
(Ե.) — Բազմ. 1905, էջ 432 ձեթ. 1ր

2. — Շարական, 1512ին, ի Ս. Ղազար
(ՀԹ.) — Բազմ. 1905, էջ 492 ձեթ. 3.

ԼԲ. — Անանուն Արեղայ, Գրիչ, 1547ին
օրինակած է Մաեսոց մը. — Կար. Թ. 1005.

ԼԳ. — Գրիգոր Քահանայ, Գրիչ, օրի-
նակած է 1560ին Աւետարան մը. ստացող
Կորապետ քահանայ. — Ս. Զ. Վաս. էջ 661.

ԼԴ. — Մեղրիսէթ Գրիչ, որդի Վերդաս
նէսի, 1573ին օրինակած է Մաեսոց մը. —

Յ. Զեռ. Վասպ. էջ 292.

Աղթամարի վերոյիշեալ գրիչներու ցան-
կին մէջ աչքի կը զարնէ անոնց շատերուն
ազգակցական կապը, զոր աւելորդ չենք
համարիր ամփոփիլ ստորեւ:

Նոյն կը յիշուին Կարապետ կրօնաւոր
(Բ) և անոր եղբոր Մկրտիչ քահանայի գա-
ւականրէն Կարապետ քահանայ (Ն) և Զա-
քարիա փրկիստփայ (Զ): Ապա սոյն Կարա-
պետն քահանայի որդիները Դանիէլ քա-
հանայ (Ե) և Թուսայ կրօնաւոր (Ը): Յե-
տոյ Դանիէլ քահանայի որդիներէն Ռով-
հաննէս Կարակապ (ԺԴ):

Դարձեալ, վերոյիշեալ Մկրտիչ քահա-
նայի որդիներէն Քաչիկի երկու գաւականները
Թուսայ կրօնաւոր (ԺԱ) և Գրիգոր քահա-
նայ (ԺԶ): Ապա այս վերջինին որդիներէն
Թուսայ քահանայ (ԻԴ): Յետոյ վերոյիշեալ
Քաչիկի ցուստերէն Արդունի որդին Թով-
մայ Արդ. Միստանց (Թ) և միւս զստեր
Հայրիմաթունի որդին Գրիգոր Արեղայ (ԻԸ):

Դարձեալ վերոյիշեալ Արդունի զստեր
Ոսկիի որդիներէն Հայրապետ Արեղայ (ԺԵ)
և Թոռ Կարապետ քահանայ (ԻԵ):

Այսպէս մէկ ընտանիքէ սերած տասն
երեք գրիչներ և ծաղկողներ իրարու յա-
ջորդած են ԺԴ. դարու կէսէն մինչև ԺԵ.
դարու վերջերը, գրիչներ, որոնցմէ շա-
տերը նշանաւոր հանդիսացած են իրենց
արտադրած գործերուն գեղեցկութեամբ և
առատութեամբ:

Ն. Վ. Մովսէսյան

ԼԵԶՈՒՆԳԻՏԱԿԱՆ

ՅՈՒՆԱԲԱՆ ՀԱՅՏԵՐԷՆ (Գ)

Ի՞նչ է քաջը այսօր տնտեսին վերայով
այլափոխուած և յարմարեցրած էր յունա-
րէնի աւելորդ է ասիլ թէ ինչ պիտի լինէր
համաձայնութիւնը և շարադասութիւնը,
որ առօրէն այն էլ միտ տարբերութիւն չու-
նէր յունարէնից և իր ազատութեամբ կա-
րող էր ստանալ ամէն ձեւ ու կարգ: Յու-
նաբան հեղինակները բոլոր թարգմանու-
թիւնները կրօն էին ճիշտ յունարէնի շա-
րադասութիւնը, խնդրատութիւնը նոյն ձե-
ւով է, ընդունուած սովորութիւն է ամա-
կանները և դերբայները միշտ համաձայ-
նեցնել գոյականի հետ ևն: Ահա մի քանի
կարճ օրինակներ:

Ձ ի վերայ հիկնացն գործս.

Կարող է գրովագական յայտնի զազգ.
Մանկան ելոյր եւ այրացիոյր եւ ներ-
գործելոյր ինչ կամ զազարելոյր (այսինքն՝
մանուկ գողով եւ յարգունս հասեալ եւ
գործելով ինչ կամ զազարելով):

Այն թուր փոփոխութիւնները՝ որ վե-
րեւում նկարագրեցինք (բառական, քերա-
կանական և համաձայնական) մի անգամից
անմիջապէս տեղի չունեցան, այլ կամաց
կամաց, սկզբում գանգաղ միայն բառա-
բանական շրջանում և այն էլ կարեւորա-
պէս բաների համար, իսկ աւելի յետոյ ըն-
դարձակուելով բոնեց սմբողջ բառաբանը
և քերականութիւնը: Այսպէս Փարպեցու
մէջ՝ որ Ե. դարու վերջում ապրած հեղի-
նակ է, ամբողջ Սահակայ տեսիլը իր մեկ-
նութեամբ, ինչպէս և Թուրքի առ Վասպ.
Մամիկանեան չունի ոչ մի բառ՝ որ կազ-
մուած լինի յունաբան դպրոցի յօրինած նա-
խամասնիկներով: Նոյնպէս է Արիշէն: Ու-
րեմացու Պատմութիւնը բաւական հարուստ
է իսկ Դուրիթ Անյաղթի գործերի ամբողջ
բառարանն ու քերականութիւնն այնպէս
յունաբան են, որ կարծես թէ առանձին

լեզու է, որ հայերենով հասկանալ անհնա-
րին կամ չաա գծուար է և որ հասկանալու
համար պետք կայ անպատճառ յունարէն
խմանալու: Դեռ կազմուած չէ յունարան
լեզուի դարէ դար զարգացման պատմու-
թիւնը: Բայց անշուշտ այդտեղ էլ եղել են
զանազան դպրոցներ, դրան իբրև ապա-
ցոյց կարիւի է յիշել եհնց այն հանգամա-
քը՝ որ միեւնոյն յունական մասնիկը մերթ
այսպէս և մերթ այնպէս է թարգմանու-
ած, այսպէս յն. սիւն լինում է բազ, չազ,
չար, փար, յար, զիա լինում է տար և
տրամ, պարա լինում է յար, տար, իւզո
լինում է սփոր և ենթ, անօթ լինում է

հակ և գիր, ապո լինում է ապ բաց կամ
թէ միեւնոյն հայերէն նախամասնիկը ներ-
կայացնում է երկու տարբեր յունական
մասնիկ. այսպէս՝ յաք ներկայացնում է
պարա և սիւն, տար ներկայացնում պարա
և զիա:

Այստեղ տալիս ենք մի քանի օրինակ
յունարան հայերէնի. թիւ 1-6 Տիմոթէոս
Կուզի Հակաճառութիւնից հատուածներ են
և իրենց դէմ ունին նաև համապատաս-
խան Ոսկեդարեան թարգմանութիւնը. —
թիւ 7 Թորենացոյց մի հատուած է. իսկ
թիւ 8-11 Դաւիթ Անյազթի գործերից՝
յունարան իրթնագոյն լեզուի իբր օրինակ:

1. Զամենայն փոյթ արարեալ գրել ձեզ
յաղապս հասարակական մերոյ փրկութեան,
հարկաւորութիւն կալայ գրել ձեզ մաղթով
նահատակիլ մի հազ տուելով սրբոցն հա-
ւատով: Քանզի արմտեցին սմանք մարդիկ
ի վաղուց յառաջագրեալք յայս դասապար-
տութիւն թնպարիշտք զԱստուծոյն մերոյ
շնորհն փոխադրողի ի զեղխութիւն և ըզ-
միայն իշխանականն և զՏէրն մերն Յի-
սուս Քրիստոս ուրացողք:

2. Եսասց իսկ Մարիամ առ հրեշտակն.
Իբր եղիցի ինձ այս, զի զայր ոչ ճանաչեմ,
եւ ասէ նժամ հրեշտակն. Հոգի սուրբ վեր-
եկեսցէ առ քեզ և կարուքիւն բարձրելոյ
հովանացի քեզ, զի և ծնիցեալը տուրք
կոչեսցի Որդի Աստուծոյ (Տիմոթ. էջ 292):

3. Եթէ փորձութիւն խնդրէք զյիսն խա-
սողի Քրիստոսի (էջ 211):

4. Զի նովաւ շինեցաւ ամենայն զ ի
յերկինս և զ ի վերայ երկրիս, տեսանելիք
և անտեսանելիք (էջ 313):

5. Յիսուս Քրիստոս, արուին զինքն
հակափրկանակ ի վերայ ամենեցուն (էջ 38):

6. Այլ են տմանք որք անհաւատաւան
իրիս, իբր զի զԱստուածոջ քչ գիտացին:
Զինչ իսկ, ասա ինձ, դիւրագոյն յուն էր-
թենէ ի գոյն ասածել, եթէ Վրոճեալի յա-
րուցանել դարձեալ: Այլ զինչ ասեն. —
Այս անուն, ասէ, նաւադոճութիւն հոմերե-
րեան և ընկղմեցաւ և անկեալ՝ զնա ըն-
կալան ձկուէք բաղումք, և ձկանցն փրա-
քանչիւր անրամ կերպո. ապա սոցուն իսկ
այառցիկ ամ յայսն գողի, իսկ ամ յայսն

զՏէր մեր Յիսուս Քրիստոս ուրացեալք
(Թուգ. 3-4):

Եւ ասէ Մարիամ ցհրեշտակն. Զի արդ
լինիցի ինձ այդ, քանզի զայր ոչ գիտեմ:
Պատասխանի ետ հրեշտակն և ասէ ցնա.
Հոգի սուրբ եկեսցէ ի քեզ և զօրութիւն
բարձրելոյ հովանի լիցի ի վերայ քո. քանզի
և որ ծնանցեալն է ի քէն՝ սուրբ է և որդի
Աստուծոյ կոչեսցի (Պուգ. Ա. 34-35):

Եթէ զփորձ ինչ խնդրէք զՔրիստոսի,
որ ինեւս ընդ ձեզ խօսի (Բ. Կոր. ԺԳ. 3):
Զի նովաւ հաստատեցաւ ամենայն, որ
ինչ յերկինս և որ ինչ յերկրի, որ երեւին
և որ ոչն երեւին (Կոզոս. Ա. 16):

Եիսուս Քրիստոս որ ետ զանձն փրկանս
ընդ ամենեցուն (Ա. Տիմ. Բ.):

Այլ են տմանք որ թերահաւատեն յի-
րացն, քանզի չգիտեն զԱստուած: Եւ արդ
աղէ, ասա ո՞ր դիւրագոյն իցէ, յունչէ ք
զոյ անել, եթէ զքակտեալն և զլուծեալն
միւս անգամ կանգնել: Այլ տես զինչ ա-
սեն. — Այս անուն, ասեն, նաւադոճութիւն
կրեաց և ընկղմեցաւ. և իբրև ան-
կաւ՝ ձկուէք բաղումք կերան զնա. և ք
ձկանցն խրքաքանչիւր ոք մի անգամ եկիւր.
և ի նոցանէն ոմն յայս խորչ և ամն յայսն

ըմբռնեցաւ և ծախեցաւ ի միւսմէ. եւլ սա յայլմէ զմարմին ունելով պարհնացեալ. և այսոքիկ դարձեալ յայլ ետառա մեռան, և սոքա թերեւս ի գաղանաց, որք զձկունսն կերան զառն ծախող. այսքանուկ խառնուա թեանն եղելոյ և ցանութեան՝ իբր դարձեալ յարիցէ ալրն. ո՞ր հողոյն ածող:

Էրեւն իսկ և զայս ասես, ով մարդ. և շորս աղջատականս հանես. որպէս անկարելի դնես... Եթէ հեթանոսք ի ցնն, որ զայս տարակուսանան, առ նոսա բեր աւսեմք... Այլք դարձեալ ասեն ի հրոյ ծախիլ և հանդերձիցն յարութիւն եղանիլ և ոտիցն զգեստից: . . . Ոչ տեսանես թզեւին որչափ ունի . . . որչափ ստեղուն և սաղարթս, քանի տես ոստս արմատս այսքան վերունելով և զոգացեալս. այս այստուհետեւ այս չափս, այսպիսիս ի կորեկանէ յայմանէ լինի՝ ի վայր արկեցելուց և նորա ապականեցելոյ նախ. և եթ՝ ոչ փոխցի և լուծցի, ոչինչ այսոցիկ եղանի: Եւ այգի իսկ այսպէս գեղեցիկս և տեսանելի և ընդունելի՝ ի թնձէն լինի նորա: Ոչ ջուր է մի ի վերուստ վայրեկանէ. իբր յայսքանս փոխարկեալ լինի. իբր յեւանի յայսքանս: . . . Ինքեան, ասա ինձ, քանզի մօտագոյն, այս սերմնս վայրարկեալս. իբր յալս, իբր ի ձեռս, իբր ի սիրտ, իբր յայսքանս պատկանի և զաղափարի . . . արդեօք ոչ յուղմագոյն զօլ թուի սոցայն զոլ տարակուսանք: . . . (Տիմոթ. էջ 323-4):

ըմբռնեցաւ, և ձգեն կերակուր այլոց. և նոցա մարմինքն այլում կերակուր անկան, և ի նոցանէ դարձեալ յայլ աշխարհ մեռան, թերեւս գաղանաց զէջ անկան որք զայն ձկունս կերան. և արդ որ այնչափ չփոթք եւ ցրումն անգամոց գործեցան, զիմրդ իցէ զի միւսանշամ այլն յարիցէ, ո՞ր հողն ի մի վայր ածիցէ:

Ընդէր խօսիս զայդ, ով այր գու, եւ տողս առանկելոց քանից յուսու և անհնարին իմն զիրան հաշուիս: . . . Եթէ հեթանոսք իցեն, որ յայն տարակուսանս մօտանիցեն, բազում ինչ ունիմք և առ նոսա ասելու: . . . Այլք դարձեալ ասեն ի հրոյ ծախին և հանդերձիցն յարութիւն լինի և իջկաց: . . . Չտեսանիցի՞ս զթզեւին, որպիսի՞ է բունն, որպիսի՞ շառաւիղքն, ո՞րչափ տերեւքն, քանի՞ ոստքն, որպիսի՞ պատեանքն մանր հատուցն զնդակեալք և որ այնչափ և այնպիսի է, ի կորեկանէ միոյ յերկիր անկելոյ ծնանի. և այն զի և նա նախ ապականեցի. և թէ չլուծանիցի և չփոխցի, և ոչ մի ինչ ունտի լինիցի: Եւ որքն որ այնչափ գեղեցիկ է ի տեսանել և զաղցր ի ճաշակել, յանպիտան թնահառէ լինի: Ո՞չ ապաքէն մի ջուր ի վերուստ իջեալ. զիմրդ յայնչափ փոփոխմունս փոփոխի. զիմրդ դառնայցէ յայնչափ պէս պէս գունակալ: . . . Բայց ի քեզ իսկ ասա, զի մերձեւորագոյն է սերմն որ սերմանի՞ զիմրդ յայս, ո՞րպէս յականջս, ի՞բր ի ձեռս, ո՞րպէս ի սիրտն, զիմրդ յայնչափ անգամս ապաւորի և յօրինի. և չթուեսցի այս քեզ առաւել ևտարակուսանք (Ոսկ. Պօղ. հտ. Բ. էջ 445-7):

7. Յարահետեւօք իմաստասիրացն և վերահայեցողք չափաբերապէս մակագրութեանց՝ զաստեղս ի լուսնոյ ասեն ընծուիլ և զլուսին արեգակամբ ուռնացեալ, և զբոլոր արեգակն յարփայինն երկնէ. հիկէն արքաոյն հեղեալ զմագուսն յերկաքանչիւր փոտին, և զանցնիւր փոտին ի ձեռն արեւ, գական ընծուի՝ ըստ դասի, ըստ քերման, ըստ մամանակի: Օրինակ իմն, այսպէս և մեք յաւեոտախաղաց շնորհիւ ցոլացեալ յիւսանալի ճառագայթից հոգեւոր հարցն, ըստ հարաւային մասանցն պարայածեալք՝ յեղեսացուցն հասանեալք քաղաք. թեթեւակի

ընդ խորս դիւանին նաւեալ՝ անցաք ի սուրբ տեղիսն իրկրպագել և մնալ վայրկեան ի Պաղեստինացուց հրահանգս:

Եւ այնպիսեալ սաղապանմիւս մտաք յնգիպտոս, յաշխարհն համբաւատենչ, յանչափից հրամարեալ ի ցրտու և ի տթոյ, ի հեղեղաց և յերաշխից, ի գեղեցիկումս մասին երկրի զգիրն ունելով, ամենազան պտղովք աւելցեալ, և անձեռագործ պարսպեալ նեղոսիւ, որ ոչ պահպանութիւն միւսն, այլ և կերակուր նմա բաւական մասունցանիլ բնաւորեաց յինքենչ, և առագամբ տէր քոյ պատահեաց և չորութեան

և խառնաշփոխ՝ առ երկրի զործաւորութիւն, և զանհոգսն ի նմա դիրարածել գետոյն բերիւք՝ հանգիտակ կղզւոյ առատագիւտս առնէ, շուրջ պարտաւեկելով և ընդամենայն հասելով, տրոհմամբ երկտասանից վտակաց: Յորոգմ բարիշաբար մեծն և՛ զեքսանդրիայ է շինեալ քաղաք բարեմասնակ ի մէջ ծովուն, և ձեռագործ լին կառուցեալ: Երրոց օդոցն քաղցրախառնութիւն փչեցեալ, որ ի լճէն բերանք արծաւկին ի ծովն, և որք ի ծովէն մօտի ելոյ որ ելանեն ստէպ ստէպ սղոխք օդոյ, անօսորունք այն որ ի ծովէն, և թանձուէք որ ի լճէն: Երրոց խառնուածն առողջագոյն զհաստատութիւն կենաց գործէ:

Սորա առաջի այժմ ոչ անցեալ նստի Պղոտեհիոս հինգակատար քաղաքամբն, զանսպառ աշխարհ պատելով, այլ Մարկոս աւետարանական քարոզութեամբն. և ոչ վիշապազին զիւցազնակաց գերեզմանք, այլ սրբոցն վայելչանան վկայարանք: Եւ ոչ ի քսան և հինգն Տուրի՝ տօնի աղնատանք, զբռնաբարձս պսակելով գրաստս և պաշտօն տանել լորտուաց, և աթերաց առնել բաշխումն, այլ ի մետասան նորին Տուրի յայտնութեանն Տեառն կատարի տօն: զյաղթող նահատակ զովել, և օտարաց առնել ընդունելութիւն և յաղքատս տուրաւ Եւ ոչ զոգն չար դիւին Սարապիայ, այլ զԲրիտանի արեւն մատուցանել պատարագ: և ոչ խնդրել հրաման պատտարանգւոյ քան զարամեանն Պրոգէիադայ, այլ ուսանել զգործութիւնս պէս պէս իմաստից ի նորն Պաատոնէ, յիմն ասած վարդապետ տէ, որում ոչ անարժան գտայ աշակերտ և ոչ անկատար վարժամաք ի յանգ ելեալ արուեստից՝ ինքնացայ:

Նաւել յելլադայ կամելով յիտալիայ բռնութեամբ անկաք հողմոց. և ողջունեալ ի հանգիստ սրբոցն Կետրոսն և Պաւլոսի, և ոչ բազում ի Հռովմայեցւոցն կացեալ քաղաքի, անցանելով ընդ Ելլադայ յԱտտիկէ, սակաւ ինչ մնացաք յԱթէնս: Եւ ի կատարել ձմերայնոյն զճն եգեալ ի Բիւզանդիոն ելանել, փափագելով մերոց հայրենացն (Աոր. Գ. կբ.):

Տ. Տեսակ սաի ի վերայ իւրաքանչիւրոյ կերպի՝ ըստ որում սաի, նախ տեսակ արժանի գոռոզութեան: Եւ սաի տեսակ և այս՝ որ ընդ բացատուկապ սեռիւս

է, ըստ որում տղորեցաք ասել զմարդ տեսակ կենդանւոյ՝ սեռոյր Եւլոյ կենդանոյր, և սպիտակ գունոյր տեսակ և եռանգիւնին ձեւոյր տեսակ: Եւ եթէ զսեռն բացատուելով՝ զտեսակն յիւեցաք, ասելով զյոլովիցն և զտարբերեցեաց տեսակաւ ի ներուն զինչէն ստորագեալ. և զտեսակն ասեմք զայն՝ որ ընդ բացատուեալ սեռիւն է: Գիտել պարտ է, վասն զի սեռն՝ որումն է սեռ, և տեսակն՝ որումն է տեսակ, երկաքանչիւր երկաքանչիւրոյր՝ հարկ է և ներկոցունց բանս վարիլ երկոքումբք:

(Ներած. Պրոփիլի, էջ 230)՝

9. Իկդ են ներ ձայնոջն ներ անձինցն ախտիցն նշանակք, և գրիցեալքն՝ ներ ձայնոջն. և որպէս գիրքն ոչ ամենեցուն նույնք և ոչ ձայնքն նոյնք: Բայց որոց ախտիկ նշանակք առաջնոցն՝ սքքին ամեհ նեցուն նոյն կիրք անձինն. և որոց ախտիկ նմանութիւնք՝ իրք անս սքքա. արդ յաւազս ախտիկ ասացեալ է ներ յաղաքս ողւոյն՝ քանզի այլոյ իրի է (Պրոփիարմ. 461):

10. Բայ է որ առնշանակէ ամանակ՝ որոյ մասն ոչինչ նշանակէ զատ, և է միշտ զայլմէց ասիցելոցն նշանակ: Եւ ասեն, զի առնշանակէ ամանակ. որպէս՝ ողլութիւն՝ անուն, իսկ ողլ է՝ բայ. քանզի առնշանակէ զայժմ գոյն. և միշտ զայլմէց ասիցելոցն նշանակէ. որկէն՝ ենթակայից և կամ, ենթակայոջն ասիցելոցն է:

(Արիստ. յղ. մեկն 463):

11. Բայց այս ոչ զնոյն նշանակէ և ոչ համանգամայն ի հարկէ և երեւելի է, զի և մու բացասութիւն՝ ըստ միոյ ստորատուութեան. քանզի զսոյն պարտ է բացասոցել զբացասութիւն, զոր ստորատուացն ստորատութիւն. և ապումնել, կամ ըստ իւրաքանչիւրոցն ումեքէ. կամ ապ ըստ բոլորեցն իմեքէ. կամ իւր բոլր բոլորէ. և ոչ զբուլորէ. Եւ ասած, որպէս՝ իք Սոկրատէս սպիտակ, ոչ է Սոկրատէս սպիտակ. և եթէ այլ ինչ, կապ ապ այլոյ, զսոյն կոչ հաւկակայ, այլ եղիցի նորա միւս եւսն, մամէնում մարդ սպիտակ՝ ոչն ամեն մարդ սպիտակ, և ումեքն մարդ սպիտակ՝ ոչն ոք մարդ սպիտակ, իսկ իքում մարդ սպիտակ՝ ոչ իք մարդ սպիտակ՝ արդ զի մու բացասութիւն, մուս ստորատութեան հակակայնէ՝ բացերեւակի: (Անդ՝ էջ 468)՝

Յունաբան հայերէնի յօրինուածութիւս

նը նկարագրելուց յետոյ մնում է մեզ քննել թէ արդեօք ի՞նչ ազդիւններէջ օգտուելով կազմեցին կամ հնարեցին յունաբանները իրենց այս նորելուկ հայերէնը և թէ որքա՞ն ընդունելութիւն գտաւ նա:

Հետ ծոգման յունաբան նախամասնիկները կարելի է բաժանել հինգ տեսակի.

1. — Նրանք՝ որ պարզապէս հայերէն ծանօթ բառեր են. ինչպէս առ (նախդիր), յար (կից), բաց (ի բացի, բացեայ), գեր (գեր ի վերոյ):

2. — Նրանք՝ որ հայերէն սովորական մի բառի արմատն են իրօք կամ ենթադրաբար. ինչպէս փոխ (փոխել, փոխանակ), հակ (հակել, հակառակ), արտ (արտաքս, արտաքին, բայց հմտ. հտե արտ ւշտարած կամ վարելի հողը, որ նոյն բառն է. հմտ. լիթ. արտկիստ հող և լատկէ դուրսը, ա. սոր. բարա արտ և արտաքս, ներ (ներքին ներքո, ներքինի), բաղ (բարաղայք Եկըցկցանք, յերկւարանք), զբաղիլ (ամի բանի յարկի, պարապիլ), ստոր (ի ստորի Սզ. Ժգ. 37, նորագիւտ Բ. Մնաց. Ի. 6, ստորին, ստորենայք, ստորւտ), շաղ (շաղիլ, շաղապատել), պար (պար Եկըր պարօ, պար առնուլ, պարոյլ, պարոյք, պարուել), տար (տար աշխարհ Եհեռու երկիր), տարաշխարհիկ Եպանդիստ, տարադէմ Եհեռազնացա, տարակաց Եհեռուն կեցածո, տարազիր, տարածամ, տարակարծ, տաւրապայման, տարապարտ, որոնք Ոսկեդարեան հայերէն բառեր են և որոնցից զէպի տար Ետարբերք մասնիկը մի քայլ է միայն մնում:

3. — Մի քանիսը հայերէն սովորական բառեր են՝ ձեւով կամ նշանակութեամբ փոփոխուած. ինչպէս ենթ (ընթ Ետակը), փաղ (նոյնը բաղ), հոմ (≡ համ, որ փոխառուել է իրանական կամ մասնիկից. յունաբան հնգլինականները յունարէն հոմո մասնիկին համաձայն կամ ծանօթ ձեւը դալքաւի են հոմ), վեր (ի վեր Եվերեւ Եբադն է; որին տրուել է անորից, վերստին, դարձեալ, կրկին՝ նշանակութիւնը՝ հանելով հայերէն վիտեթին Ոսկեդարեան բառից կամ հետեւելով յունարէնին, ուր անա իբր մակբայ նշանակուած է Եվերը, քարծրը, իսկ իբրեւ մասնիկ Եյետա, հակառակ, նորից), շար (հյ. շարել Եգիւղեր, դասել Եբայից, արմատը շար, շարք՝ որին տրուել է Եկից,

յար, միասին և նշանակութեւնը), ապ (հյ. ապ բացասական մասնիկն է, որ պարսկական ծագում ունի և որ գտնուում է ապաւ լիպ, ապինիպ, ապերասան, ապախուրել են. բառերի մէջ). պատահաբար նման է հյ. ապա Եյետոյ բառի հետ, ինչպէս և յն. ապր Եհեռու, բաց՝ են, որ քր մասնիկի նշանակում է Եժխտում, բացասութիւն, կատարում, վերադարձ ևն. Վերաշապէս փար նոյն է պար ձեւի հետ Եյնչպէս ցոյց են տալիս այս մասնիկով կազմուած մի քանի բառերը, որոնք են փաւրառնայ, փարաբարձութիւն, փարաբաւկան, փարադրել, փարադրութիւն, որոնք ունինք նաեւ պարաբառնայ ևն. ձեւերով:

4. — Թակ «վրայ» մասնիկը, իբրեւ առանձին բառ գտնուած ենք թուշերենի մէջ մաք վրայ, ի վերայ, ձեւով և որով կազմուած են Եանապան Եանանցիք:

5. — Վուղորովին անծանօթ են դեր և տրամ մասնիկները:

Քերականական ձեւերի մէջ մի քանիսի ծագումը շատ պարզ է. այսպէս երկակիր ու մասնիկը առնուած է երկու բառի վերջաւորութիւնից, իգականի է մասնիկը (սէ, նէ), հանուած է մի խումբ իգական յատուկ և հասարակ անուններէ ծայրից (Իսայիանէ, Հովսիսիմէ, սերաստէ), արականից փոխառուել է Կովկասեան լեզուներից (հմտ. չերքեզերեն բլակը Եեղակիտ), չեւոզօք մու յիշեցնում է արդի գաւառական աղլ. մուշն Եսէկչա, մոնք, դոնք Ե նոնք յիշեցնում են արդի մերոնք, ձերոնք, աւնոնք ձեւերը. հաղովական ոջ, սյր, ոււմ մասնիկները սովորական են Ոսկեդարեան հայերէնի մէջ որոշ 'դէպքերում (հմտ. սեղւոյ, կղււղ, նորա, սորա, այսր Ե այս սորիկ, այլոյմ, միւսոււմ), ըն կամ ե իթէ հյ. ընք բառը չէ; յունարէն էն մասնիկն է, անրկ Եայսօք բառը գտնուած ենք այժմ Հաւարկի բարբառի մէջ իսէկի, փսէկի Եայսօք ձեւով, բայերի և նախադասելուածը սովորական է հին հայերէնի միակ վանի բայաձեւերի մէջ (հետա, էտա, էօժ) և նոյն է յունարէն Ե նոյնիմաստ նախադասելուածի հետ, Կրաւորականի կոփիւր, բերիւր ևն. ձեւը այսօր էլ դանում ենք Կարնոյ բարբառի մէջ կիլիւր, փկիւլիւր կը են. ձեւերով:

Այս քուրորդի հետեւում է որ յունաւս

բանեւորի նորմուռութեանց մեծագոյն մասը հանուած է հայերէնի արդէն ունեցած տարբերից, որոնք ձեւաւորուած են համեմատ չլուարէնի, երբեմն նոյն իսկ ձայնով կամ հնչումով կարմարեցնելով նրան: Մեծամասնութեան օրինակից կարող ենք հետեւեցնել՝ որ մնացեալ անծանօթ ձեւերն էլ քաղուած են հայերէնից և ոչինչ չկայ քուրդովն ինքնահնար, ինքնահնար է միայն այդ տարրերի գործադրութեան ձեւն ու եղանակը, որ հայերէնի մէջ ո՛չ միայն գոյութիւն ունեցած է, այլ և նոյն իսկ հակառակ է նրա ոգուն:

Վերջին հանգամանքը գուցէակն է տալիս այն՝ թէ ինչ ընդունելութիւն գտաւ յունարան հայերէնը մեր մէջ: Լեզուների ընդհանուր փորձից յայտնի է որ քերականութիւն ստեղծել անկարելի է. այդ հոգի վրայ անհատական ջանքերը արժէք չունին. նրանք միշտ էլ բաղխուել են ժողովրդի կամ հանրութեան ժայռ անտարբերութեան և ուշ կամ կանուխ ջնջուել են: Այսպէս և յունարան հայերէնը, նոյն իսկ այն ժամանակ, երբ յունարան հայերէնը ապրում էր իր ամենափայլուն շրջանը, սովորական լեզուն չի գաղարել գործելուց ո՛չ միայն ժողովրդի մէջ, ուր յունարան հայերէնի ընդունելութեան մասին խօսք չի կարող լինել, այլ և գրագէտների շրջանում, որոնք սկսած Ե. դարից մինչև ԺԳ. դար շարունակել են արծաթի հայերէնը յունարան պարոյցի հետ կողք կողքի: Յունարան հայերէնը մնացել է ուրեմն առանձին մի խմբակի ուսումնական լեզուն՝ լայն խաւերի համար օտար, անհասկանալի և անընդունելի:

Հայաստանի որ մասում արդեօք յառաջացաւ այս լեզուն. Մեյն Աւստրալիայի Ելեմենտար Բուխ, էլ Վասում է թէ յունարան հայերէնի մէջ գտնւում են հիւսիսային արեւելեան հայերէնի քերականութեան առանձնայատկութիւններից մի քանիսը: Սրանից հետեւում է որ յունարան հայերէնը Հայաստանի հիւսիս արեւելեան կողմը (Արձախ, Սիւնիք, Փայտակարան) ձեւացաւ: Բայց բազմամուտ և խորաթափանց հայագէտը իր այս սասած հաստատե-

լու համար ոչ մի օրինակ կամ ապացոյց մէջ չի բերում: Եւ կարծում եմ թէ ընդհակառակը այդ լեզուն կազմուած էր Հայաստանի հիւսիս արեւմտեան շրջանում (Ճայք ևն.), ուր կար յունասէր յունամիտ հայութիւն: Եզ. Վեկե, մեկ պայման, սերկեան ապսթոս, կրաւ. քերիւր ևն. ձեւերը հիւսիսն են մատնանշում:

Թէ մինչև երբ տեւեց յունարան զըպլուցի գոյութիւնը՝ դեռ յայտնի չէ, բայց անշուշտ Թ. դարից այս կողմ չի գալիս, իսկ ԺԲ. դարում ջնջուած է իսպառ: Այսօր յունարան պարոյցի գործերը հնութեանց կարգն են անցած և կազմում են միայն բանասիրական հետաքրքրութեան նիւթ: Նրա յօրինած քերականութիւնը արողջովն ջնջուած է, պահելով միայն մի հետք, այդ է Եհ իգական գերանունը, որ իր ներս սեռականի հետ երբեմն գործածուում է բանաստեղծների լեզուի մէջ: Գալով բառաբանական ատաղձին, կիրառութեան օտեսակետից կարող ենք բաժանել հինգ կարգի.

Ա. — Այն բաները՝ որոնք չունէին իրենց համազօրը Ոսկեդարեան հայերէնում, լրացնում էին լեզուի թերի կողմերը, հետեւաբար գտան առանձին ընդունելութիւն և այսօր էլ սովորական գործածութիւն ունին հայերէնի մէջ: Այսպէս են՝ օրինակ՝ ենթակայ, տրամաբանել, տրամաբանութիւն, տրամագիծ, ապաթարց, առողանութիւն, մալրայ ևայլն ևայլն բաները: Այս կարգի բաները ոչ միայն ընդունուած են արդի հայերէնի մէջ, այլ և նրանց օրինակով կազմուել են բազմաթիւ նման ձեւեր, ինչպէս առարկայ, յարաբերութիւն, արտապոլութիւն, պարբերական, շարունակութիւն և այլ հազարաւոր բաներ, որոնք կազմում են մեր արդի լեզուի հարստութիւնը և առանց որոնց մեր գիտական լեզուն չառ տկար ու անզօտ պիտի լինէր: Այստեղ է յունարան պարոյցի արժանիքը:

Բ. — Այն բաները՝ որոնց համազօրները թէ և կային Ոսկեդարեան հայերէնի մէջ, բայց չունէին պահանջուած ուժը և կամայայտ համարուեցին և մրցման ժամանակ տեղի տալով յունարան ձեւերին, խափանուեցան, օրինակ՝

— ընծայութիւն
— յողել
— միաւոր

ապացոյց
բաղադրել
եզակի

յոզնակի	—	բազմաւոր
շաղկապ	—	զօդ
ներկայ	—	առաջիկայ
ներգործել	—	ազդել, յաջողել
ստորագրութիւն	—	ձեռնագիր
տեսակ	—	տպ
մականուն	—	անուն յորջորջանաց

Այս կարգի բառերն էլ սովորական մազօրները ունենին Ոսկեդարեան հայերէնի գործածութիւն ունին արդի հայերէնի մէջ և նրանց հետ միասին և հաւասար աստիճանի վրայ գործածուեցան և այժմ էլ

Գ. — Այն բառերը՝ որոնք իրենց հա-

ներհակ	—	հակառակ
ստորագրութիւն	—	նկարագրութիւն
վերծանել	—	ընթերցանութիւն

Գ. — Այն բառերը՝ որոնք ունենին իրենց չբացնում, հետեւաբար և թէ՛ հին հայերէն-համազօրները Ոսկեդարեան հայերէնում, նում և թէ արդի լեզուի մէջ ընդունելու բոլորովին աւելորդ և անհաշակ նորարա-թիւն չին գտել, օրինակ՝ նութիւններ էին, ո՛չ մի պահանջ չէին

ստատակացութիւն	հկատարս	զարմանք, հիացումն
շարագիր	սիւնգրաֆիս	մատենագիր
յարահետեւող	պարակուլութոս	արբանեակ, աշակերտ
վաղորդայնազգեցիկ	հոսֆորոս	արուսեակ
գերասպարել	իւ պերասպիզո	պահպանել, խնամել
վերադիւնել	անակոմիզո	նահանջել
ննրամիտ	եննոոս	խելացի, իմաստուն
ստորախշտեցուցանել	կատակոյմոս	հանդարտել

Ե. — Այն բառերը՝ որոնք չունենին ի-պահանջները, բայց յետոյ աւելորդ դար-րենց համազօրները հայերէնում, թերեւս ձան և իրենց անճշտի կազմութեան պատ-լրացնում էին իրենց ժամանակի գիտական ճառով էլ բոլորովին ջնջուեցան, օրինակ՝

մակեռանկիւն	—	վեցանկիւն
մակսաստկութիւն	—	առաւել սաստկութիւն
մակադոյնուտ	—	սյատկութիւն բնական կամ պատահական՝ սեփ-հականեալ քան զայլ պատահումն սյայսկաս
ննրստորագրական	—	սորինչ ննթագրի իբրև ստոյգ արժանի

ՊՐՈՖ. Հ. ԱՃԱՌԵԱՆ